600.0600.05.11.08

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2008 թվականի №600Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի № 683Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դ) ենթակետը և 2-րդ կետի ժդ) ենթակետը, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 42-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «Համարների կամ կոդերի զբաղեցման թույլտվության հատկացման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №343Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը համարների զբաղեցման թույլտվություն տրամադրելու մասին» № 683Ա որոշման 1-ին կետով հաստատված №1 հավելվածի №3 աղյուսակի հավելավճարով ծառայությունների բիզնես տողով որոշվող՝ «ցանցի վերջնական կետի համարը» սյունակը լրացնել «00100; 00101; 00102; 00898; 00902; 00907; 00909; 01030; 01035; 01041; 01049; 01055; 01070; 02100; 07000; 07911; 08000; 08888; 09000; 55500; 55550; 55555» թվերով:

2. Առաջարկել «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը՝

1) շարունակել 900 հասանելիության կոդով 55500; 55550; 55555 համարների սպասարկումը՝ ըստ «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքված պայմանագրի, իսկ 00898, 00902, 00907, 00909, 01030, 01035, 01041, 01049, 01055, 01070, 02100, 07000, 08000, 08888, 09000 համարների սպասարկումը՝ ըստ «Նիկիտա Մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված պայմանագրի.

2) համարների տրամադրման դիմում ներկայացնելու պահից 10-օրյա ժամկետում «Յուսա Թրեյդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել 900 հասանելիության կոդով 00100, 00101, 00102, իսկ «Էյ Դի Սքրին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ՝ 07911 համարների տրամադրման պայմանագրերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
5 նոյեմբերի 2008թ.
ժամը 16^{00}